*Մենք դիտմամբ քաղուածօրէն մէջ բերինք ժամանակակիցների խօսքերը, հնարաւորութիւն տալով ընթերցողներին պատկերաւորել ճշմարիտ հովուապետին արժանի դէմքը, որ երեւան է գալիս յանձին Տ. Կոստանդին Կաթուղիկոսի: Իր պատուէրով կամ ժամանակ գրուած ձեռագիրների յիշատակարաններից երեւում է նորա սէրը դէպի գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստները, որ բարձր զարգացման են հասնում նորա հովանաւորութեամբ Հռոմկլայում:*



Պատկ. 5.— Ձեռ. Աւետ. Սեբաստիայի, Այժմ Բալթիմոր Թերթ 8, 1262 Թ.